

ՎԱՂԸ` ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՆ Է ՄԵՐ ԶԱՅՆԸ` ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԲԱՐՐՈՒԹՅԱՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՇԱՆՈ» (ՆԱՃԱՐԹՅՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 83 - 84 (17294) ՈՒՐԲԱԹ 25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 Թ. ԳԻՆԸ 40 ԹԵՐԹԻ



Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմած ընտրողների միասնական ցուցակում ընդգրկված է 3 508 294 ընտրող: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառմամբ ընտրությունների կնասնակցի 3 113 747 ընտրող: Նշենք, որ ընտրողների ընդ-

Վրաստանում բացվել է 3 044 ընտրատեղամաս, այդ թվում՝ բացառիկ դեպքերում ստեղծված 13 ընտրատեղամաս, որից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում, իսկ մեկը՝ հոգեբուժարանում: Ինչ վերաբերում է արտերկրում ստեղծված տեղամասերին, ապա, 42 երկրի 53 քաղաքներում ստեղծվել է 67 ընտրական տեղա-

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՄ ՔՎԵՆ ԿԱՐՈՂ Է ՈՐՈՇԻՉ ԴԱՌՆԱԼ ԵՐԿՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱՄԱՐ

Հոկտեմբերի 26-ին Վրաստանում կանցկացվեն նորանկախ երկրի պատմության մեջ 11-րդ գումարման խորհրդարանի ընտրությունները:

հանուր թվից 135 922-ը առաջին անգամ են մասնակցում ընտրություններին:

Ընտրական վարչություն՝ փոխադրվող տուփի խնդրանքով դիմել է 64 238 ընտրող:

Այլ պետությունում ստեղծված ընտրական տեղամասերի հատուկ ցուցակներում ընտրողների թիվը 95 910 է: Ընտրողներին կապասարկեն, ընդհանուր առմամբ, 3 111 ընտրատեղամասեր:

մաս: Ընտրությունների օրը հայտարարելուց մինչ օրս ընտրողները 4ԸՀ կայքում եւ բջջային հավելվածում ընտրողների միասնական ցուցակի տվյալները ստուգել են 1 311 773 անգամ, արագ վճարման մեքենաների միջոցով՝ 29 277 անգամ:

«Յուրաքանչյուր քվեն կարող է որոշիչ դառնալ երկրի ճակատագրի համար», - այսպես են մտածում հասարակության ակտիվ ներկայացուցիչները, որոնք գիտակցում են այս ընտրությունների կարևորությունը, դրանում իրենց ցուցաբերած բարձր մասնակցությունը:

Հիշեցնենք, որ մեկ ձայնը շատ անգամ պատմություն է փոխել, օրինակ՝ 1645 թվականին մեկ ձայնը Օլիվեր Կրոմվելին հնարավորություն տվեց կառավարել Անգլիան, իսկ 1776 թվականին ԱՄՆ-ում մեկ ձայնով անգլերենը փոխարինեց գերմաներենին:

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԵՐԿՐԻ ԽԱՂԱՂ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ՄԻԱԿ ԵՐԱՇԽԻՔ



Հոկտեմբերի 23-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցությունը, խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, երկրի 10 տարածաշրջաններում անցկացրած հավաքները պսակեց մայրաքաղաքի կենտրոնական հրապարակում բազմաձայնադրանք հանրագումարային հանրահավաքով:

Հանրագումարային հանրահավաքին մասնակցելու համար մայրաքաղաքում հավաքվեցին Վրաստանի բոլոր երկրամասերի ներկայացուցիչները:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԲԱՆԻՉԵ. «12 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ ՀԻՄՔԵՐ ՍՏԵՂԾԵՑԻՆՔ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՍՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»



Հոկտեմբերի 24-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի նախագահությամբ, կայացավ երկրի կառավարության նիստը, որի ընթացքում վարչապետը ներկայացրեց մշակույթի եւ սպորտի նոր նախարար Թիմաթին Ռուխաձեին, նշելով, որ ընտրություններից հետո վերոնշյալ նախարարությունից սպորտի բաժինն առանձնացվելու է եւ այն, ամենայն հավանականությամբ, կգլխավորի Շալվա Գոգուաձեն: Միաժամանակ, վարչապետը խորհրդարանական ընտրություններից երկու օր առաջ, հանրագումարեց իր գլխավորած կառավարության եւ, ընդհանրապես, «Վրացական երազանքի» 12-ամյա գործունեության արդյունքները:

Վրաստանի կառավարության նիստում, Կոբախիձեն հայտարարեց, որ ընթացիկ տարիներին Վրաստանի տնտեսական աճը նշանակալիորեն կգերազանցի այն ցուցանիշները, որոնք կանխատեսվել է, մասնավորապես, Արժույթի միջազգային հիմնադրամը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Իր հանրագումարային խոսքում, Կոբախիձեն հայտարարեց, որ ընթացիկ տարիներին Վրաստանի տնտեսական աճը նշանակալիորեն կգերազանցի այն ցուցանիշները, որոնք կանխատեսվել է, մասնավորապես, Արժույթի միջազգային հիմնադրամը:

- Ինչպես կանխատեսվել է հիմնադրամը, 2024 թվականի համար Վրաստանի տնտեսական

աճը կլինի ամենաբարձրը ոչ միայն տարածաշրջանում, այլև՝ ողջ Եվրոպայում: Ընթացիկ տարվա կանխագծումներով, տնտեսական աճը 2,5 անգամ գերազանցում է Եվրամիության մյուս թեկնածու անդամ երկրների համապատասխան ցուցանիշը: Կանխատեսման համաձայն, տնտեսական աճի տեմպերը կպահպանվի (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՈՐԳԻ ՇԱՐՎԱՇԻՉԵՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՈՐ ԿՅՈՐԴԻՆ

Հոկտեմբերի 23-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն՝ Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին ներկայացրեց Հայաստանում Վրաստանի նոր ռազմական կցորդ փոխգնդապետ Թեյմուրազ Մախտուրաձեին:

Հայաստանի պաշտպանության նախարարությունում կայացած հանդիպմանը Սուրեն Պապիկյանը շնորհավորեց նորանշանակ ռազմական կցորդ փոխգնդապետ Թեյմուրազ Մախտուրաձեին՝ մաղթելով արդյունավետ աշխատանք պաշտպանական գերատեսչությունների

միջեւ համագործակցության զարգացման եւ ամրապնդման գործում:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ պաշտպանության բնագավառում համագործակցության ընթացքն ու հեռանկարները:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ԻՐԱԿԼԻ ԿՈՔԱԽԻՉԵ. «12 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ ՀԻՄՔԵՐ ՍՏԵՂԾԵՑԻՆՔ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՍՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պանվեն 2024-2029 թվականներին, ինչը, բնականաբար, տնտեսական արդյունավետ քաղաքականության արդյունք է, որը հաջողությամբ վարում է մեր տնտեսական քիմը.- հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ 2024-2029 թվականներին Վրաստանը տնտեսական աճով 1,6 անգամ կգերազանցի մյուս թեկնածու երկրների ցուցանիշները:

- Մեր խնդիրն է է՛լ ավելի ուժեղացնել այդ ցուցանիշը: Համոզված եմ, որ երկրում տնտեսական աճը կլինի ավելի բարձր, քան կանխատեսում է Արժույթի միջազգային հիմնադրամը: Եվ դրա համար ունենք բոլոր հնարավորությունները, մշակված համապատասխան ծրագիր, ըստ որի՝ երկրի էկոնոմիկան 2028 թվականի համար կգերազանցի 130 միլիարդի շեմը: Դրա հաշվառմամբ, մշակվել են կոնկրետ ծրագրեր ու նախագծեր եւ համոզված եմ, որ հաջողությամբ կհասնենք մեր նպատակին.- հայտարարեց վարչապետը:

ՀՈՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է՝ ԱՆՎՃԱՐ ՄՆԱԼՈՎ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋ

Կառավարության նիստում, իր խոսքում վարչապետ Իրակլի Կոբախիձեն անդրադարձավ նաեւ հողատարածքների համակարգչային գրանցման ծրագրին եւ հայտարարեց, որ այն կշարունակվի, եւ քաղաքացիները կունենան իրենց հողատարածքներն անվճար գրանցելու հնարավորություն՝ մինչեւ 2025 թվականի վերջ:

- Հողերի գրանցման բարեփոխման շրջանակներում, արդեն ավարտվել է մեկուկես միլիոն հողատարածքի չափման գործընթացը եւ արդեն գրանցվել է շուրջ 1 միլիոն հողատարածք: Դա նշանակում է, որ մեկ միլիոն մարդ դարձել է հողի սեփականատեր: Այսօրվա դրությամբ, չափման եւ գրանցման ամենօրյա գործընթաց է իրականացվում 3500-ից մինչեւ 4000 հողատարածքի համար: Թեպետ դեռեւս կան չգրանցված հողատարածքներ, ուստի, մինչեւ 2025 թվականի վերջ հողատարածքների անվճար գրանցման գործընթացը կշարունակվի.- ընդգծեց Իրակլի Կոբախիձեն:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻՆ՝ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Խոսելով կորոնավիրուսի համավարակի ժամանակ առանձին կլինիկաների սահմանված տուգանքների մասին վարչապետը նշեց, որ դրանց ստուգումից հետո կընդունվի նրանց համար արտոնություններ սահմանելու մասին որոշում, գումարի 20 տոկոսի վճարման դեպքում կլինիկաները լրիվությամբ կազատվեն տուգանքների վճարումից:

Միաժամանակ, վարչապետը նշեց, որ առողջապահության ծրագրերին մասնակից կլինիկաներում սպասարկման սակագների մարման ժամկետները կնվազեցվեն:

- Մոտ ապագայում կիրականացվեն նշանակալի բարեփոխումներ ու փոփոխություններ: Կոնկրետ քայլեր կձեռնարկվեն սակագների մարման ժամկետների նվազեցման ուղղությամբ, ինչը կհանգեցնի առողջապահության ծրագրերին մասնակից կլինիկաներին եւ բժշկական անձնակազմի կողմից ներկայացվող սպասարկումների սակագների մարման արդյունավետությանը: Նաեւ



կկարգավորվի ուռուցքաբանական հիվանդությունների բուժման, կլինիկաների համար նախատեսված վարձատրության կարգը, ինչը կկարգավորի սակագնային քաղաքականությունը եւ կհամապատասխանի իրականությանը.- հայտարարեց վարչապետը:

VIP ՄՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՐԵԼԻ Է ՕԳՏՎԵԼ ԱՌԱՆՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, անդրադառնալով առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, նշեց, որ կառավարության որոշմամբ բուժառուի կտրվի ընտրության իրավունք՝ բուժումը շարունակել առողջապահության ծրագրով նախատեսված, ըստ չափորոշիչների բարձր ծառայությունից կամ օգտվել, այսպես կոչված, համավճարման մոդելի մեխանիզմից, առանց դուրս գալու առողջապահության ծրագրերից, որի ընթացքում կարող է ստանալ ծրագրով նախատեսված ողջ ֆինանսավորումը, իսկ լրացուցիչ բուժման կուրսի համար կվճարի միայն, այսպես կոչված, VIP սպասարկման սակագինը: Վարչապետի հավաստմամբ, կառավարության սույն որոշումը դրական ազդեցություն կունենա հիվանդների ֆինանսական վիճակի վրա, քանի որ հազարավոր քաղաքացիներ ստիպված չեն լինի իրաժարվել առողջապահության ծրագրերից, որպեսզի ստանան տարբերվող բժշկական սպասարկում, որը մինչ այդ գործող համակարգում հնարավոր չէր:

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԱՌՅՈՒՆԱՎԵՏՈՐԵՆ ԳՈՐԾԵԼ ԲՈԼՈՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Կառավարության նիստում, վարչապետ Իրակլի Կոբախիձեն, իր խոսքում հանրագումարեց տարբեր գերատեսչությունների աշխատանքի արդյունքները եւ անդրադարձավ առաջիկա ծրագրերին:

- Իրականում անցած 12 տարիների ընթացքում կայուն հիմքեր ստեղծեցինք, որպեսզի մեր երկիրը կարողանա արագ զարգանալ եւ առաջիկա չորս տարիների ընթացքում անցնի բացարձակապես մեր աստիճանի: Դրա համար բոլոր հիմքերը ստեղծված են: Ինչ վերաբերում է էկոնոմիկային, ապա մենք կարողացանք Վրաստանի էկոնոմիկան 28 միլիարդից հասցնել 90 միլիարդի: Վերջին չորս տարվա ընթացքում մեր էկոնոմիկան աճել է 40 միլիարդ լարիով: Մենք հավակնոտ ծրագիր

ունենք, ըստ որի՝ երկրի էկոնոմիկան հասցնելու ենք 130 միլիարդ լարի: Դրա համար անհրաժեշտ է խաղաղություն եւ երկրի կայուն զարգացում: Նույնը վերաբերում է բյուջեի ավելացմանը: Երկրի բյուջեն 2012 թվականին 8,5 միլիարդ լարի էր, իսկ այս տարի դարձավ 28 միլիարդ լարի: Մշակել ենք ծրագիր, ըստ որի՝ առաջիկա չորս տարում բյուջեն կգերազանցի 40 միլիարդ լարին, ինչը նշանակում է՝ ավելի մեծ թվով նախագծերի իրականացում, երկրի առաջընթաց բոլոր ուղղություններով: Ինչ վերաբերում է գործազրկությանը, ապա կազմել ենք հավակնոտ ծրագիր, ստեղծել 200 հազար նոր աշխատատեղ, որի արդյունքում երկրում գործազրկության մակարդակը կնվազի մինչեւ 4 տոկոս: Ինչ վերաբերում է աղքատությանը, ապա 2012 թվականին Վրաստանում աղքատության շեմին ապրում էր 1120 միլիոն մարդ: Այդ ցուցանիշը նվազեցրել ենք, հասցրել 400 հազարի եւ 2028 թվականին աղքատության շեմին ապրողների թիվն առավելագույնս կկազմի 150 հազար.- հայտարարեց վարչապետը:

Իրակլի Կոբախիձեի խոսքով՝ ծրագրված է առաջիկա չորս տարիների ընթացքում նվազագույնը ներքերել 9 միլիարդ դոլարի ներդրում:

Անդրադառնալով ճանապարհների շինարարության, մայրուղիների կարգավորման գործընթացներին, վարչապետը նշեց, որ նախորդ իշխանության օրոք կառուցվել էր ընդամենը 68 կիլոմետր ավտոմայրուղի, այն դեպքում, երբ միայն վերջին ամիսների ընթացքում կառուցվել է 34 կիլոմետր ընդհանուր երկարությամբ բունել, 22 կիլոմետր ընդհանուր երկարությամբ կամուրջ:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետն անդրադարձավ նաեւ Անակլիայի խորջրյա նավահանգստի շինարարության մեկնարկի, Թբիլիսիի եւ Քութայիսիի օդանավակայանների տարողականության ավելացման, Թբիլիսիի մոտակայքում՝ Վազիանիում նոր օդանավակայանի շինարարության թեմային: Վարչապետի հավաստմամբ, վերոնշյալ նախագծերի, ինչպես նաեւ ենթակառուցային մյուս ծրագրերի իրականացումը, լուրջ ազդակ է երկրում զբոսաշրջության զարգացման ուղղությամբ: Նրա խոսքով, ծրագրված է օտարերկրյա զբոսաշրջիկների թիվը հասցնել 11 միլիոնի: Դա 2028 թվականի համար երկրի պետությունը կլրացնի 6,4 միլիարդ լարիով:

Ըստ վարչապետի՝ էներգետիկայի ոլորտում ծրագրված է հավակնոտ խնդիր՝ 2030 թվականի համար Վրաստանը դարձնել էներգետիկայի առումով ինքնապահով ու անկախ երկիր: Իրակլի Կոբախիձեն անդրադարձավ նաեւ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, նշելով, որ նորակառույց եւ վերանորոգված դպրոցների առկայությունը, մանկավարժների վարձատրության ավելացումը հնարավորություն է ընձեռում որակական նոր մակարդակի հասցնել կրթության համակարգը: Խոսելով բարձրագույն կրթության ուղղությամբ իրականացվող միջոցառումների մասին, վարչապետը նշեց, որ նշանակալի քայլեր են իրականացվել երկրի բուհերի ենթակառուցվածքի նորացման եւ բարելավման ուղղությամբ, Քութայիսիում սկսել է գործել միջազգային համալսարան, որը նախատեսված է 20 հազար ուսանողի համար: Միաժամանակ, քայլեր են ձեռնարկվում ողջ երկրի տարածքով մարզական ենթակառուցվածքի կարգավորման նորացման ուղղությամբ:

ԵՆԹԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՋԴԱՐԱՐՎԵՑ ԱՆԱԿԼԻԱՅԻ ԽՈՐԶՐՅԱ ՆԱՎԱՐԱՆԳՍԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵԿՆԱՐԿԸ

Հոկտեմբերի 22-ին հանդիսավոր պայմաններում ազդարարվեց Անակլիայի խորջրյա նավահանգստի շինարարության մեկնարկը:

Միջոցառմանը մասնակցեցին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին:

Ընդգծելով նոր նավահանգստի բացառիկ նշանակությունը, երկրի էկոնոմիկայի զարգացման Վրաստանի տարանցիկության ներուժի ավելացման գործում, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ, նախնական հաշվարկով, նավահանգստի շինարարության առաջին փուլի համար, կծախսվի 600 միլիոն դոլար: Նոր նավահանգիստը, ըստ վարչապետի, հնարավորություն կտա գործարկման առաջին իսկ փուլում աշխատանքով ապահովել ավելի քան 500 մարդու եւ տարեկան ընդունել 600 հազար կոնտեյներ, ավելի քան 8 միլիոն տոննայի տարբեր տեսակի բեռներ:



Համեմատության կարգով նշենք, որ Բաթումի եւ Փոթիի նավահանգիստները 2023 թվականին, ընդհանուր առմամբ, ընդունել են 701 հազար կոնտեյներ, ինչը համարվում է ռեկորդային եւ 47 տոկոսով գերազանցում է 2022 թվականի ցուցանիշը:

ԲԱՑՎԵՑ ՌԻԿՈԹԻ ՄԱՅՐՈՒՂՈՒ ՆՈՐԱՑՎԱԾ 12 ԿԻԼՈՄԵՏՐԱՆՈՑ ԾԱՆԱՊԱՐՀԱՅԱՏՎԱԾԸ

Հոկտեմբերի 22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի, փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլիի մասնակցությամբ, կայացավ Ռիկոթի մայրուղու ճանապարհի լրացուցիչ 12 կիլոմետրանոց նորացված ճանապարհահատվածի բացման արարողությունը:

Ռիկոթի մայրուղու շինարարության նախագծի շրջանակներում, ընդհանուր առմամբ, կառուցվելու է քառազուտի՝ 52 կիլոմետրանոց ճանապարհ՝ 51 թունելով եւ 97 կամրջով: Ներկա դրությամբ, ավտոտրանսպորտային միջոցներն արդեն օգտվում են քառազուտի 48 կիլոմետրանոց ճանապարհահատվածից, 49 թունելից եւ 88 կամրջից:

Նշենք, որ Ռիկոթի մայրուղային ճանապարհի շինարարությունը իրականացվում է Ասիայի զարգացման բանկի (ADB), Եվրոպայի ներդրումային



բանկի (EIB) եւ Համաշխարհային բանկի (WB) կողմից տրամադրված վարկերի ու պետական բյուջեի համաֆինանսավորմամբ: Ընդհանուր առմամբ, նախագծի իրականացման համար հատկացվել է 2,6 միլիարդ լարի:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ԱՄԱՔԱՆԱՔԻ ԱՎԱՐՏԻՆ Է ՄՈՏԵՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՊՐՈՅՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄԸ



LSI-ի կրթական եւ գիտական ենթակառուցվածքների զարգացման գործակալության փոխտնօրեն Լեւան Մուշկուղիանին եւ Վրաստանի խորհրդարանի կրթության, գիտության եւ երիտասարդության հարցերի հանձնաժողովի ղեկավար Գիվի Միքեանաձեն, Ախալքալաքի քաղաքապետ Մելքոն Մակարյանի եւ տեղական ինքնակառավարման մարմինների այլ ներկայացուցիչների, ինչպես նաեւ Ախալքալաքի-Նինոծմինդայի ընտրատարածքում «Վրացական երազանք» կուսակցության պատվիրակ Սամվել Մանուկյանի, պատգամավորության թեկնածու Սմբատ Կյուրեղյանի հետ միասին, Ախալքալաքի մունիցիպալիտետի Ալաստան եւ Դաղեջ գյուղերում ստուգեցին դպրոցներում ընթացող վերականգնողական աշխատանքները, որոնց արդյունքում երկու դպրոցներում, ուսումնական տարածքներին զուգահեռ, կգործեն գիտության եւ համակարգչային լաբորատորիաներ, գրադարան, բժշկի կաբինետ, ռեսուրս սենյակ, սպորտային ենթակառուցվածքներ եւ հանգստի տարածքներ: Դպրոցները լիովին կհարմարեցվեն հաշմանդամու-

թյուն ունեցող անձանց համար, կկազմակերպվեն վերելակներ, թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ, ապահովված կլինեն համակարգչային ցանցերով, հակահրդեհային անվտանգության, ջեռուցմամբ, ջրահեռացման եւ էլեկտրահաղորդման նոր համակարգերով: Ախալքալաքի մունիցիպալիտետի Ալաստան գյուղի 250 աշակերտի համար նախատեսված հանրակրթական դպրոցի ամբողջական վերականգնման եւ վերագինման ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 4,434,000 լարի: Իսկ Դաղեջ գյուղի հանրակրթական դպրոցը նախատեսված է 260 աշակերտի համար եւ դպրոցի նախածի ընդհանուր արժեքը կազմում է 2 417 500 լարի:

տուրիզմի զարգացման ծառայությունը: Հանդիպմանը քննարկվեցին տարբեր արդիական հարցեր, այդ թվում ուսուցչի մասնագիտական զարգացման եւ կարիերայի առաջխաղացման սխեմայում իրականացված փոփոխությունները: Հանդիպումն անցավ հարց-պատասխանի ձևաչափով, ուսուցիչները հնարավորություն ունեցան իրենց հետաքրքրող խնդիրների վերաբերյալ հարցեր ուղղել եւ անմիջապես Մշակույթի ծառայության աշխատակիցներից տեղեկատվություն ստանալ:

ԲՈՒՆԻՍԻ ԳՈՐԾԱՐԿՎԵՑ ԲԱՉՏԱԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՄԱՐԶԱՎԱԼԻՃ

Բ ո լ Ն ի ս ի ի մունցիպալիտետում ավարտվեց բազմադրժառույթ մարզադահլիճի շինարարությունը: Նոր ենթակառուցվածքային շինարարության ընթացքում ներկայացվեցին Բուրբուլի երկրամասի պետական լիազոր-նահանգապետ Գիորգի Դոխտուրիշվիլին, Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Դավիթ Տաբիձեն, փոխտնօրեն Գիորգի Ցիբաձեն, Բոլնիսի մունիցիպալիտետի քաղաքապետի պաշտոնակատար Բուբա Գոբեջիշվիլին: Բազմադրժառույթ մարզադահլիճի շինարարության համար մունիցիպալային զարգացման հիմնադրամից հատկացվել էր 2,6 միլիոն լարի: Դատարաստեց ԱՐԵՎԻԿ ԱՆՈՒԿՅԱՆԸ



ՆԻՆՈՑԻՆԴԱՅԻ ՆԱԿԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԵՏԱՐԱՆՈՒՄ



Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանդիպում ուսուցիչների հետ: Հանդիպումը կազմակերպել էր Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի, հուշարձանների պահպանության, երիտասարդների հարցերի եւ

ՅԵՅՈՒՆԵՍԿՈՅԻ ՆԱԶՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ «ՍԱԴԱԽԼՈ» ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՄԱՔՍԱԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄ ԶԻՅՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային ղեկարտամենտի աշխատակիցները, «Սադախլո» ավտոմոբիլային մաքսակետում, բացահայտել են իրավախախտման փաստ:

Սաքսային վերահսկողության շրջանակներում, մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Հայաստանի Հանրապետությունից Վրաստան մուտք գործող տրանսպորտային միջոցը: Ռենտգենային ստուգման արդյունքում հայտնաբերվել է չհայտագրված շվեդական արտադրության 5620 տուփ ծամելու ծխախոտ: Օտարերկրյա քաղաքացին վերոնշյալ ապրանքը թաքցրել էր մեքենայում հատուկ պատրաստած արկղում, եւ այն հայտագրում չէր հիշատակել: Հատկանշական է նաեւ այն փաստը, որ վերոնշյալ ապրանքի վրա վրացերեն լեզվով չէր ներկայացված մանա պարագայում պարտադիր կարգով ներկայացվող բժշկական զգուշացումները, որի համար չհայտագրված ծխախոտի վրա անպայման պետք է անցկացվեր ակցիզավորում:

Օրինախախտում թույլ տված քաղաքացու գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայություն: Լրացուցիչ տեղեկատվությանը՝ փաթեթավորման վրա ներկայացվող բժշկական զգուշացումների եւ գրանցումների կարգի մասին, ինչպես նաեւ ողջ տեղեկատվությանը՝ ապրանքի կողմից, դրանց պարտադիր կարգավորման-բաշխման վերաբերյալ, կարող եք ծանոթանալ հետևյալ հեղուկով՝ <https://infohub.rs.ge/ka/work-space/document/800cbef0-32bf-4f06-94fe-8afd2bf144a0?openFromSearch=true> <https://rs.ge/CommodityCodes?cat=2&tab=1>



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը, հոկտեմբերի 25-ի հանգստյան օրվա կապակցությամբ, տարածել է հայտարարություն:

Եկամուտների ծառայության հաղորդագրության համաձայն, հոկտեմբերի 25-ին մաքսագերծման տնտեսական գոտիները, մաքսային անցակետերը, սահմանափակված քանակությամբ, բուսասանիտարական եւ անասնաբուժական վերահսկողության բաժնի սահմանային տեսչական ստորաբաժանումները, ինչպես նաեւ մաքսային գնահատման եւ ապրանքների դասակարգման բաժինները կշարունակեն գործել սովորական վերահսկողության բաժնի սահմանային տեսչական ստորաբաժանումները, ինչպես նաեւ մաքսագերծման բաժինները եւ մաքսային գնահատման եւ ապրանքների դասակարգման բաժինը կշարունակեն գործել սովորական ռեժիմով: Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը տեղեկացնում է, որ 2024 թվականի հոկտեմբերի 25-ին տնտեսական գոտիները, մաքսային անցակետերը, սահմանափակված քանակությամբ, բուսասանիտարական եւ անասնաբուժական վերահսկողության բաժնի սահմանային տեսչական ստորաբաժանումները, ինչպես նաեւ մաքսային գնահատման եւ ապրանքների դասակարգման բաժինները կշարունակեն գործել սովորական ռեժիմով: Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության վարչության սպասարկման կենտրոնները: Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն

Advertisement for 'ՍԱԴԱԽԼՈ' (SADAKHLO) featuring a building icon, the text 'ՊԱՅՄԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆ ՈՒ ԱՄԱՌԱՆՈՅԸ 135 ԼԱՐԻՈՎ', 'ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԻՐ 300 ԼԱՐԻ ԹԵԺ ԳԻԾ: 0125', and 'ՊԱՅՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ'.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎՐԱՍՏԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ» ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՐՈՉԱՐՇԱՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԹԻՒԽՍԻ, ԻՍԱՆԻ



Նախընտրական հանդիպումների շրջանակում, «Վրաստանի Երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունից Իսանիի պատվիրակ Նիկա Էլիսաշվիլին, Թբիլիսիի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր Կախա Լաբուշիձեի հետ միասին, հանդիպում ունեցավ մայրաքաղաքի Քեթեան բազուկու փողոցի բնակիչների, «Արմազի» մարզակույրի աշխատակիցների եւ սաների, Իսանիի շրջանում ապրող վետերանների խորհրդի անդամների, Թբիլիսիի Վագիստուբանի թաղամասի բնակիչների հետ:

Հանդիպումներին պատգամավորության թեկնածու Նիկա Էլիսաշվիլին խոսեց արդեն իսկ իրականացված եւ ծրագրված ենթակառուցային նախագծերի մասին, ներկայացրեց կուսակցության նախընտրական ծրագիրը, ճշեցրեց, որ դրանում առանձնակի ուշադրություն է հատկացված բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

ՄԻՍԱԼՔԱՄԲԻ - ՆԻՆՈՍԻՆԳՎ

Խորհրդարանական ընտրությունների համար Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքում «Վրացական Երազանք» կուսակցության պատվիրակ Սամվել Մանուկյանը, պատգամավորության թեկնածու Սմբատ Կյուրեղյանը շարունակում են հանդիպումները տեղի բնակիչների հետ: Նրանք, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր Մելքոն Մակարյանի ու Անի Մոսոյանի ուղեկցությամբ, հանդիպումներ անցկացրին Ախալքալաքիի մունիցիպալիտետի Բարալեթ, Իխտիլա, Մերանիա, Մեծ եւ Փոքր Սամսար, Կոթեիլա, Տուրքիս, Լոմատուրքիս, Ղադո, Մոդիգամ, Ալաստան,

Դադեշ, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գորելովկա, Գանձա, Սաթխա գյուղերի բնակիչների հետ: Հանդիպումներին մանրամասն խոսվեց անցած չորս տարիներին մունիցիպալիտետում իրականացված եւ



ծրագրված լայնածավալ ենթակառուցային նախագծերի մասին:

ՄԻՍԱԼՔԻՆԵ - ԲՈՐԺՈՒՄ - ԱՍԳԻՆՅԱ - ԱԳԻՔԵՆԻ

Առաջիկա խորհրդարանական ընտրությունների քարոզարշավին ակտիվ ներգրավված Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի Ախալցխիսի, Բորժոմիի, Ասպինձայի եւ Ադիգենիի մեծամասնական պատգամավոր, հոկտեմբերի 26-ի ընտրություններում «Վրացական Երազանք» պատվիրակ Անտոն Օբլաշվիլին, քարոզարշավի շրջանակում, հանդիպումներ անցկացրեց Ախալցխիսի մունիցիպալիտետի Շղալթբիլա, Միսիլիսի, Աբաթխեի գյուղերի, Ասպինձայի մունիցիպալիտետի շրջկենտրոնի երիտասարդական կենտրոնի ներկայացուցիչների հետ:



Անտոն Օբլաշվիլին, Վրաստանի խորհրդարանի կրթության կոմիտեի նախագահ Գիվի Միքեանաձեի հետ, հանդիպումներ ունեցավ վերոնշյալ մունիցիպալիտետների հանրային դպրոցների մանկավարժների հետ:

ՄԱՌՆԵՈՒԻ - ՎԱՐՎԱՐՍԻ

Վրաստանի խորհրդարանի 10-րդ գումարման Մառնեուլիի եւ Գարդաբանիի մեծամասնական պատգամավոր, առաջիկա խորհրդարանական ընտրությունների վերոնշյալ մունիցիպալիտետներում «Վրացական Երազանք» պատվիրակ Ջաուր Դարգալին հանդիպումներ է անցկացրել Մառնեուլիի մունիցիպալիտետի Սադախլոյի վարչական միավորի տարածքում ընդգրկված Թամարիսի, Ղաչազան գյուղերի ընտրական տեղամասերի բնակիչների, ինչպես նաեւ՝ մունիցիպալիտետում գործող բիզնես ոլորտի ներկայացուցիչների հետ:

ԲՈՒՆԻՍԻ - ԴՄԱՆԻՍԻ - ԹԵՐԹԻՇՎԱՐԻ - ԾԱԿԱ



Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետ, հոկտեմբերի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների՝ Բոլնիսիի, Դմանիսի, Թեթրիժարոյի եւ Ծակայի մունիցիպալիտետներում «Վրացական Երազանք» պատվիրակ Դավիթ Շերազադիշվիլին, քարոզարշավի շրջանակներում, հանդիպումներ է ունեցել Բոլնիսիի մունիցիպալիտետի շրջկենտրոնի, Զվեմո Բոլնիսիի, Կազրեթի ավանի, Ծակայի մունիցիպալիտետի Աշխալա, Թեթրիժարոյի մունիցիպալիտետի Սամշվիլդե, Դադեթ գյուղերի բնակիչների հետ:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ԱՉՎԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՎԱՅԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ԿՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՌՈՒՄԱԿՆԵՐՈՒՄ

Մեկ օր եւս եւ Վրաստանում կանցկացվեն երկրի 11-րդ գումարման խորհրդարանի ընտրությունները: Ի՞նչ սկզբունքով է հաշվարկվում 5 տոկոսի ընտրաշենք հաղթահարած ընտրական սուբյեկտներին պատկանող մանդատների թիվը, եւ որքանով է իրատեսական նոր գումարման խորհրդարանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորների առկայությունը:

Ինչպես արդեն հաղորդել ենք, առաջիկա ընտրությունները, ի տարբերություն նախորդների, կանցկացվեն միայն համամասնական ընտրակարգով, այսինքն, ընտրողներին վերապահվում է՝ ելնելով կուսակցությունների ներկայացրած ընտրական ծրագրերից, ընտրել այս կամ այն կուսակցությունը եւ, ստացած քվեների արդյունքում, տվյալ կուսակցությունը կստանա պատգամավորական համապատասխան թվով մանդատներ: Ելնելով դրանից, առանձնակի նշանակություն է ստանում ընտրացուցակում թեկնածուների ներկայացման թվային հաջորդականությունը, քանի որ ցուցակներում ընդգրկված բոլոր թեկնածուները չէ, որ կարող են հայտնվել ցուցակի երաշխավորված կամ հավանական երաշխավորված թվաշարքում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ստացած տեղեկության համաձայն, ընտրությունների արդյունքներով 5 տոկոսի ընտրաշենքը հաղթահարած ընտրական սուբյեկտներին պատկանող մանդատների թվի հաշվարկը իրականացվում է հետևյալ սկզբունքով՝ 5 տոկոսի ընտրաշենքը հաղթահարած ընտրական սուբյեկտի օգտին քվեարկած ձայների թիվը բազմապատկվում է խորհրդարանական ընդհանուր մանդատների թվով (150), ստացված արդյունքը բաժանվում է 5 տոկոսի ընտրաշենքը հաղթահարած ընտրական բոլոր սուբյեկտների օգտին տրված ձայների թվով: Դրան ավելանում է ընտրություններին մասնակից, սակայն 5 տոկոսի ընտրաշենք չհաղթահարած ընտրական սուբյեկտների ձայների, վերոնշյալ սկզբունքով հաշվարկման արդյունքում ստացված մանդատների թիվը՝ ելնելով ընտ-

րաշենք հաղթահարած ընտրական սուբյեկտների օգտին տրված ձայների տոկոսային հաջորդականությունից: Ընդհանուր առմամբ, առաջնորդվելով նախորդ ընտրությունների արդյունքներով, 5 տոկոսի ընտրաշենքը հաղթահարած ընտրական սուբյեկտները ստանում են վատագույն դեպքում 2, լավագույն դեպքում՝ 4-5 պատգամավորական մանդատ:

Բնականաբար, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում կուսակցությունների ընտրացուցակներում ազգային փոքրամասնությունների ներգրավման, ցուցակում նրանց զբաղեցրած համարի եւ, վերջին հաշվով, խորհրդարանական մանդատի ստացման հարցը:

Սկսենք կառավարող «Վրացական Երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության ընտրացուցակից (ընտրահամարը՝ 41): Ինչպես արդեն հաղորդել ենք, ընտրական քարոզարշավին, ընտրական առանձին մարզերում, այն է՝ մունիցիպալիտետներում «Վրացական Երազանք» ներկայացրեց պատվիրակների, ովքեր ակտիվ հանդիպումներ էին անցկացնում տեղի բնակիչների հետ, ներկայացնելու անցած տարիներին «Վրացական Երազանքի» կառավարման ժամանակ երկրի ձեռքբերումներն ու ընթացիկ նախընտրական ծրագրերը: Միաժամանակ, նշվեց, որ այդ պատվիրակներն անվերապահովվեց ընդգրկվում են կուսակցության ընտրացուցակում: Կոնկրետ ազգային փոքրամասնությունների կապակցությամբ՝ Մառնեուլիի մունիցիպալիտետում որպես պատվիրակ առաջարկված Ջաուր Դարգալին ընտրացուցակում 25-րդն է, Ախալքալաքի-Նինոծմինդայի ընտրատարածքում

ներկայացված պատվիրակ Սամվել Մանուկյանը՝ 36-րդը: Բացի նրանցից, «Վրացական Երազանքի» ընտրացուցակում 66-րդը՝ Սամվել Միրզենե է, 68-րդը՝ Սմբատ Կյուրեղյանը, իսկ 78-ը՝ ազգությամբ քուրդ Իսկո Դասենը: Նշենք, որ ցուցակում ընդգրկված ազգային փոքրամասնության բոլոր ներկայացուցիչները Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի պատգամավորներ էին:

Ընդհանուր առմամբ, «Վրացական Երազանք» կուսակցության ընտրացուցակում ներկայացված է 169 թեկնածու:

«Միասնություն-Ազգային շարժման» (ընտրահամարը՝ 5), ընտրացուցակում ներկայացրած 98 թեկնածուների թվում ընդգրկվել է ազգային փոքրամասնության 5 թեկնածու, ընդ որում, նրանցից առաջինը՝ Ռաֆի Օրուշովը, ցուցակում 56-րդն է, իսկ միակ հայազգի թեկնածու Արսեն Կարապետյանը՝ 90-րդը, ինչը, ամենայն հավանականությամբ, զրոյի է հասցնում խորհրդարանական մանդատ ստանալու հավանականությունը:

Ընտրացուցակի 77 թեկնածուների թվում ազգային փոքրամասնության 5 թեկնածու է ընդգրկել «Վրաստանի հայրենասերների դաշինքը» (ընտրահամարը՝ 8) եւ նրանցից չորսը՝ «Ալտ Ինֆո» հեռուստաընկերության աշխատակիցներ են:

«Կոալիցիա փոփոխությունների համար» Գվարամիա, Մելիա, Գիրջի, Դրոա» (ընտրահամարը՝ 4) քաղաքական միավորումը իր 85 թեկնածուից կազմված ցուցակում ներկայացրել է ազգային փոքրամասնության երեք թեկնածու եւ, եթե ցուցակի թվով 10-րդը՝ Օքսիա Քազումովը տեսականորեն պահպանում է խորհրդարանում ընտրվելու հնարավորությունը, ապա նույն ցուցակում 45-րդ է 83-րդ համարները զբաղեցնող Մելիք Ռաիսյանի ու Գագիկ Դարբինյանի ընտրվելու հավանականությունը երեւի զրոյական է:

Գրեթե նույն իրավիճակն է նաեւ քաղաքական մյուս սուբյեկտների ընտրացուցակում:

կում: Մասնավորապես, «Տրիբունա» (ընտրահամարը՝ 21) ընտրացուցակում 60 թեկնածուների թվում նշված հայազգի թեկնածուներ Գագիկ Մելքունովը (ցուցակում 7-րդն է), Դավիթ Ռատսկյանը (14), Ալբերտ Բադալյանը (52) քիչ հավանական է, որ նրանք ընտրվեն խորհրդարան, քանի որ հարցումների արդյունքներով «Տրիբունան» նվազ հավանական է, որ հաղթահարի 5 տոկոսի ընտրաշենքը:

31 թեկնածուից կազմված «Վրաստանի միասնության եւ զարգացման կուսակցության» (ընտրահամարը՝ 3) ցուցակում ներկայացված է ազգային փոքրամասնության 6 թեկնածու: Գիշտ է, այստեղ երկրորդ համարով ներկայացված է Քյամալ Մուրադխանովը, իսկ 7-ի տակ՝ Յանա Ավակովան, սակայն այս քաղաքական միավորումն էլ, ըստ հարցումների, չի կարողանա հաղթահարել 5 տոկոսի ընտրաշենքը:

5 տոկոսի արգելափոխը հաղթահարելու նվազ հավանականություն ունեցող կուսակցությունների թվին են պատկանում նաեւ՝ «Եվրոպական ժողովրդավարներ» (ընտրահամարը՝ 6, ցուցակում 32 թեկնածու, 17 համարի տակ ներառված է այլազգի միակ թեկնածու Զովհաննես Խուրշուտյանը), «Գախարիա Վրաստանի համար» (ընտրահամարը՝ 25, ցուցակի 115 թեկնածուից միայն մեկն է ազգային փոքրամասնությունից՝ 55 համարի տակ Նարինե Գինոսյանը), «Չախ դաշինք» (ընտրահամարը՝ 26, 34 թեկնածուից երեքը՝ ազգային փոքրամասնությունից, նրանցից Կարինե Զարությունյանը 13-րդն է), «Մենք» (ընտրահամարը՝ 23, 50 թեկնածուների թվում 27-րդը՝ Օլգա Զարաթյանն է):

Ավելացնենք, որ ընտրություններին մասնակից մյուս քաղաքական սուբյեկտների ընտրացուցակի ուսումնասիրության արդյունքում, ազգային փոքրամասնությունների եւ ոչ մի ներկայացուցիչ չկարողացանք գտնել:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ